

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/10

2 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Արտուր Վանոյանի 12.11.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 07.11.2014 թ-ի թիվ 6100775 ստուգման ակտի դեմ:

Ա/Ձ Արտուր Վանոյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի 13.10.2014 թ-ի թիվ 6100775 հանձնարարագրով իրականացված և ստուգման արդյունքում 07.11.2014 թ-ին կազմված օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության թիվ 6100775 ստուգման ակտի վերաբերյալ գանգատաբերը հայտնում է, որ ամբողջությամբ առարկում է ակտում նշված փաստերի առնչությամբ, քանի որ 01.10.2014 թ-ից մինչև 06.10.2014 թ-ը չի իրականացրել վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեություն, այլ իրականացրել է բացառապես շրջանառության հարկով հարկվող առևտրային (առք ու վաճառքի) գործունեություն, որի համար կներկայացնի շրջանառության հարկի հաշվարկ՝ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված ժամկետներում: Նմանատիպ դեպքեր եղել են նաև 2-րդ ու 3-րդ եռամսյակներում, որոնց համար սահմանված կարգով ներկայացվել են շրջանառության հարկի հաշվարկներ: Հետագայում չի բացառվում, որ նման իրավիճակները կարող են կրկնվել, կախված աշխատանքների բնույթից:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Արտուր Վանոյանը խնդրում է չեղյալ համարել նշված ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի 13.10.2014 թ-ի թիվ 6100775 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Արտուր Վանոյանի մոտ կատարվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 07.11.2014 թ-ի թիվ 6100775 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 94.500 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ Ա/Ձ Արտուր Վանոյանը ք.Երևան, Գրիբոյեդով 26շ, 29 շինություն հասցեում իրականացնում է վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեություն թվով 1 (մեկ) աշխատատեղով, որի ամսեկան արտոնագրային վճարը կազմում է 15.750 դրամ, սակայն ըստ Նոր Նորքի ՀՏ տեղեկատվական բազայում առկա տվյալների և կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2014 թ-ի հոկտեմբեր ամսվա համար համաձայն «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջների ՀՏ է ներկայացրել արտոնագրային վճար վճարող համարվելու մասին թիվ 1 ձևով սահմանված հայտարարությունը 07.10.2014 թ-ին, այսինքն՝ 01.10.2014 թ-ից մինչև 06.10.2014 թ. աշխատել է առանց արտոնագրի (կցվում է նշված ժամանակահատվածի ֆիսկալ հաշվետվությունը): «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն տնտեսվարող սուբյեկտին նշանակվում է տուգանք առանց արտոնագրի գործունեություն փաստացի իրականացնելու ժամանակահատվածի (բայց ոչ պակաս, քան երեք ամիս) վճարման ենթակա արտոնագրային վճարի կրկնակի չափով՝ գումարով 94.500 դրամ (1 աշխատատեղ X (15000 X 1.05) X 3 ամիս) X 2:

Քննարկման ընթացքում գանգատաբերը նշեց, որ վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեությունից բացի ամսվա որոշակի օրերին իրականացնում է նաև առևտրային գործունեություն, մասնավորապես՝ վաճառում է մազի ներկ: Գանգատաբերը պնդեց նաև, որ 01.10.2014 թ-ից մինչև 06.10.2014 թ. ընկած ժամանակահատվածում իր կողմից իրականացվել է բացառապես առևտրային գործունեություն, այսինքն՝ այդ օրերին իր կողմից վարսավիրական ծառայություններ չեն մատուցվել: Հետևապես, հսկիչ-դրամարկղային մեքենայով արտոցված հասույթն ամբողջությամբ գոյացել է առևտրային գործունեությունից: Այդ իսկ պատճառով արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարությունն իր կողմից ներկայացվել է միայն 07.10.2014 թ-ին:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ստուգման իրականացնող անձինք 01.10.2014 թ-ից մինչև 06.10.2014 թ. ընկած ժամանակահատվածում Ա/Ձ Արտուր Վանոյանի կողմից վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեությամբ զբաղվելու փաստը հիմնավորելու համար հիմք են ընդունել զուտ այն հանգամանքը, որ գանգատաբերը զբաղվում է վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեությամբ, և որ հսկիչ-դրամարկղային մեքենայով այդ ընթացքում արտոցովել է հասույթ: Այսինքն, ստուգման ընթացքում, որը տևել է 23.10.2014 թ-ից մինչև 27.10.2014 թ-ը, չի արձանագրվել Ա/Ձ Արտուր Վանոյանի կողմից վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեությամբ զբաղվելու որևէ փաստ, այն դեպքում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում ստուգման ակտը կազմվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի պահանջների խախտմամբ: Հետևապես, քննարկվող դեպքում, ըստ էության, կիրառելի են նույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, որի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Գանգատաբերի պնդումները՝ 01.10.2014 թ-ից մինչև 06.10.2014 թ. ընկած ժամանակահատվածում բացառապես առևտրային գործունեություն իրականացված լինելու վերաբերյալ, հիմնավորում է նաև այն հանգամանքը, որ 2014 թ-ի 2-րդ և 3-րդ եռամսյակներում առևտրային գործունեություն իրականացնելու համար Ա/Ձ Արտուր Վանոյանի կողմից սահմանված կարգով ներկայացվել են շրջանառության հարկի հաշվարկներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով Հանձնաժողովը եզրակացնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Ղ Ո Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 07.11.2014 թ-ի թիվ 6100775 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

